ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ամալյա Մկրտչի Գալստյան
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու

Զբոսաշրջության կայուն զարգացման նախապայմանների ապահովումը, սպառողների իրավունքների և շահերի պաշտպանությունը, միջազգային չափանիշներին համապատասխան զբոսաշրջային ենթակառուցվածքների, զբոսաշրջության կարգավորող օրենսդրական համակարգի բարելավումը հանդիսանում են արդիական հիմնախնդիրներ ինչպես ոլորտի, այնպես էլ տնտեսության առաջընթացի համար:

Զբոսաշրջության ոլորտը զարգացել և հասարակության շրջանում իր ներկայիս դրսևորումներով հետաքրքրություն է առաջացրել 20-րդ դարի երկրորդ կեսերից՝ կրելով բազմաթիվ երկրների տնտեսության զարգացման, քաղաքականության և հասարակական հարաբերությունների բարելավման, մշակույթային ժառանգության պահպանման կարևորագույն առաքելություն: Միայն XX դարի երկրորդ կեսին աշխարհի միջազգային զբոսաշրջիկների թիվն աճել է շուրջ 40 անգամ, ճյուղի նման արագընթաց զարգացման գործում մեծ դեր ունի աշխարհի, հատկապես զարգացած երկրների բնակչության կենսամակարդակի բարձրացումը, զբոսաշրջության նոր տեսակների տարածումը[1]: Այսպես 1950թ. աշխարհում զբոսաշրջիկների թիվը կազմել է շուրջ 50 միլիոն, 2016թ.՝ 1,235 միլիարդ նախորդ տարվա համեմատ աճը կազմել 3.9%, 2020թ. կանխատեսվում է, որ կկազմի 1,4-1,6 միլիարդ: Զբոսաշրության ճյուղին բաժին է ընկնում համաշխարհային տնտեսության 10%-ը, այսպես ըստ Միավորված ազգերի կազմակերպության Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպության հրապարակած տվյալների 2017թ. այլ երկրներ զբոսաշրջության նպատակով իրականացված ուղևորությունների թիվը կազմել է 1,323 միլիարդ, 2018թ. կազմել է շուրջ 1,4 միլիարդ՝ նախորդ տարվա համեմատ 6-%-ով ավել[2]: Համաշխարհային աշխատաշուկայում զբոսաշրջությանը բաժին է ընկնում աշխատատեղերի (2016թ.) 10%-ը (109 մլն մարդ): Հայաստանում զբաղվածներից միայն յուրաքանչյուր 30-րդն է աշխատում զբոսաշրջության ոլորտում (3,3%): Աշխարհում

---

[1] **Галстян А.М.** Нормативно-правовое регулирование туристской отрасли в республике Армения // “Аллея Науки” научно-практический электронный журнал, 2018, Т. 2, № 9(25), сс. 380-385, Alley-science.ru, ISSN 2587-6244.

[2] Annual report 2017, Word Tourism Organization, 2018, p.12, http://www2.unwto.org/annual-reports.

կան շուրջ 50 երկրներ (Անդորրա, Ֆրանսիա), որտեղ զբոսաշրջային այցելությունների քանակը գերազանցում է ազգաբնակչության թվաքանակին, այս հարցում Հայաստանը մեծ անելիքներ ունի, քանզի 2017թ. տվյալներով 1 բնակչի հաշվով զբոսաշրջիկների քանակը կազմել է ընդամենը 0.5: Հետևաբար յուրաքանչյուր պետության տեղն ու դերը զբոսաշրջության միջազգային շուկայում պայմանավորված է ինչպես աշխարհաքաղաքական դիրքով, այնպես էլ երկրում ոլորտի պետական քաղաքականության իրականացման նպատակայնությամբ ու արդյունավետությամբ, գործունեության կանոնակարգման նորմատիվ իրավական համակարգի կայացածությամբ:

Հայաստանի, ինչպես նաև այլ երկրկների զբոսաշրջության զարգացումը պահանջում է առողջ և նպաստավոր օրենսդրական համակարգի առկայություն: Զբոսաշրջության ոլորտում իրավական հարաբերությունները ենթադրում են բազմաբնույթ և բազմաֆունկցիոնալ հարաբերություններ, որում ներգրավված են պետությունը, տեղական և արտասահմանյան զբոսաշրջային ոլորտի կազմակերպությունները (ուղևորափոխադրողներ, հյուրանոցներ, ռեստորաններ, մշակույթային և ժամանցի կազմակերպություններ) և ոլորտի թիրախը հանդիսացող զբոսաշրջիկները:

Զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներն ու ուղղությունները սահմանված են 2003թ. հոկտեմբերի 17-ին ընդունված «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում և 2007թ. ընդունված «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգով»: Օրենքը կարգավորում է զբոսաշրջային գործունեությունում ներգրավված սուբյեկտների իրավահարաբերությունները՝ սահմանելով իրավունքներ, պարտականություններ և տարբեր պարտադիր ընթացակարգեր: Զբոսաշրջության ոլորտի իրավական կարգավորումը պետական քաղաքականության հիմնախնդիրներից է և հետևաբար նպաստավոր նորմատիվ օրենսդրական դաշտի առկայությունը կխթանի այդ ոլորտի կայուն զարգացմանը ասել է թե զբոսաշրջիկների թվի շարունակական ավելացմանը՝ ապահովելով եկամուտների ավելացում, աշխատատեղերի ստեղծում: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ոլորտը դասելով տնտեսության զարգացման գերակա ճյուղերի շարքին, նպատակադրվել է 2017-2022թթ. տարեկան զբոսաշրջության նպատակով այցելությունների թիվը նվազագույնը հասցնել 3 միլիոնի՝ ապահովելով տարեկան 3 միլիարդ դոլար եկամուտ[1]:

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» օրենքով սահմանվում է պետության (պետական կառույցների) դերակատարումը

[1] Программа Правительства Республики Армения, Постановление Правительства Республики Армения № 581-А от 1 июня 2018 года.

զբոսաշրջության զարգացման և ընդլայնման գործում՝ նպատակ հետապնդելով աջակցել զբոսաշրջության նորարական, առավել մրցունակ տեսակների զարգացմանը, միջազգային տարբեր հարթակներում Հայաստանի պատշաճ ներկայացվածությանը, ազգային եկամտում զբոսաշրջության մասնաբաժնի ավելացմանը, համաչափ տարածքային զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ու աղքատության նվազեցմանը: Այդ նպատակով օրենքում ամրագրվում են ոլորտում պետական քաղաքականության հետևյալ հիմնական սկզբունքները՝

1. զբոսաշրջության ճանաչումը՝ որպես տնտեսության գերակա ճյուղ,
2. զբոսաշրջության դինամիկ զարգացման համար բարենպաստ, տնտեսական, իրավական և քաղաքական դաշտի ապահովումը,
3. վիճակագրական տվյալների հավաքագրումն ու որակյալ ուսումնասիրությունների ու վերլուծությունների իրականացումը,
4. զբոսաշրջիկների և ոլորտում տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանությունը,
5. զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության շարունակական զարգացումը՝ Հայաստանի տարբեր ասպեկտներով ճանաչվելիության բարձրացմանը,
6. շրջակա միջավայրի և պատմամշակույթային ժառանգության ռացիոնալ օգտագործումն ու պատշաճ պահպանումը[1]:

Այս իմաստով չափազանց կարևորվում է շրջանների զբոսաշրջության պոտենցիալի՝ պատմամշակութային, էկո, ժամանցային ակտիվ օգտագործումը:

Ինչպես ցանկացած նորմատիվային ակտ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» օրենքը ևս ունի հայեցակարգային հասկացություններ, որոնց մեջ մտնում են հիմնական հասկացություններ և տերմիններ: Օրենքում «զբոսաշրջությունը» սահմանվում է որպես ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, կրոնական, ազգականներին այցելության, մասնագիտական, գործնական և այլ նպատակներով բնակության մշտական վայրից (երկրից) այլ վայր (երկիր) առավելագույնը մինչև մեկ տարի անընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեություն՝ առանց վճարվող աշխատանք կատարելու:

Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության մեթոդաբանության՝ «Զբոսաշրջությունը ճանապարհորդություն է և այնպիսի վայրերի այցելություն, որոնք գտնվում են զբոսաշրջիկի սովորական միջավայրի սահմաններից դուրս, այցելություն ոչ ավելի քան 12 ամիս ժամանակով,

[1] ՀՀ Օրենքը «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին», ԱԺ,17.12.2003,ՀՕ-11-Ն :

ցանկացած նպատակով, բացառությամբ վարձատրվող գործունեություն ծավալելու»[1]:

Պայմանավորված այն հանգամանքով, որ նորարակական տեխնոլոգիաների առաջընթաց զարգացումը, ներքին տնտեսաքաղաքական իրադարձությունները, միջազգային աշխարհաքաղաքական և տնտեսական արդի զարգացումները էապես ազդում են զբոսաշրջության կառուցվածքի և զարգացման վրա, «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» օրենքը բազմիցս բարեփոխվել է՝ նշանառության տակ առնելով ոլորտի զարգացման առաջնահերթ հիմնախնդիրների լուծումը, ինչպիսիք են՝ զբոսաշրջության օրենսդրական համակարգի բարելավումը, պետական - մասնավոր հատված համագործակցության արդյունավետության բարձրացումը, զբոսաշրջիկների իրավունքների պաշտպանումը, զբոսաշրջային ինֆրակառուցվածքների միջազգային չափանիշներին համապատասխանեցումը:

Այդ նպատակով ՀՀ կառավարությունը շարունակաբար մշակում և իրականացնում է զբոսաշրջության, դրա նյութատեխնիկական բազայի զարգացման բազմաբնույթ ծրագրեր և մոտեցումներ, սահմանում է զբոսաշրջության կազմակերպման պրոցեսում ներգրավված հարակից ոլորտների՝ հյուրանոցային, տրանսպորտային ծառայությունների որակավորման և արտոնագրման կարգերն ու ընթացակարգերը. սահմանում է զբոսաշրջային տարածաշրջաններ, կենտրոններ՝ ընդգրկելով ՀՀ և քաղաքային և գյուղական բնակավայրերը. միջազգային զբոսաշրջության սահմաններում կնքում է զբոսաշրջության բնագավառում համագործակցության միջազգային պայմանագրեր: Զբոսաշրջության տեսլականը կյանքի կոչելու գործում պետական պատկան մարմինների կողմից հաշվի առնելով ժամանակի մարտահրավերները խսիտ կարևորվում է պետական և մասնավոր հատվածի արդյունավետ համագործակցության ընդլայնումը:

Հայաստանում զբոսաշրջային գործունեությունը կարգավորվում է՝

1. ՀՀ Սահմանադրությամբ,
2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքով,
3. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով,
4. «Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքով,
5. «Զբոսավարի և ուղեկցորդի գործունեության լիցենզավորման կարգը եվ լիցենզիայի ձևը հաստատելու մասին» ՀՀ որոշումով և զբոսաշրջային ծառայությունները կարգավորող այլ օրենքներով և իրավական ակտերով:

---

[1] **Маринин М.М.** Туритические формальности и безапасность в туризме, М., 2002, с. 6.

Ինչպես նաև եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում, ապա կիրառվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի նորմերը: Զբոսաշրջության ոլորտը կարգավորող ազգային նորմատիվ ակտերը սերտորեն փոխկապակցված են միգրացիոն քաղաքականության, սուբյեկտների մուտքը և ելքը կանոնակարգող իրավական նորմերի, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի հետ: Այսպիսով և պետությունը, և օրենսդրությունը պետք է ապահովեն բոլոր շահագրգիռ կողմերի իրավունքների համահավասար կատարումը:

Զբոսաշրջության զարգացման գործում ոլորտը կարգավորող օրենքի և այլ նորմատիվ ակտերի կարևորությունը շեշտադրելով առանձնացնենք Հայաստանում զբոսաշրջության իրավական համակարգի բարելավման ուղիները.

- օրենսդրության համապատասխանեցումը ազգային տնտեսության և զբոսաշրջության քաղաքականության դրույթներին,
- զբոսաշրջության ոլորտում ներգրավված հարակից՝ սպասարկող ճյուղերի գոյություն ունեցող նորմատիվների, դասակարգումների վերանայում՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցում, համապատասխան ուղեցույցների կանոնակարգերի մշակում, որոնք կնպաստեն զբոսաշրջային օբյեկտների և ծառայությունների որակի բարձրացմանը, առկա խնդիրների և սահմանափակումների բացահայտմանը,
- ինքնագնահատման և որակի վերահսկողության, պրոֆեսիոնալիզմի խրախուսման համակարգերի ձևավորում, նպատակ հետապնդելով զարգացնել զբոսավարների ինստիտուտը,
- պետության կողմից մրցակցային համահավասար հավասար պայմանների ապահովում,
- վիճակագրական հաշվառման ամբողջականացում (կարողությունների վերաբերյալ լիարժեք, ամփոփ տեղեկատվության ապահովում՝ կարողությունների գնահատում, բազաների ստեղծում),
- զբոսաշրջիկների իրավունքների պաշտպանում, ազատ տեղաշարժման ապահովում,
- թիրախ հանդիսացող երկրների համար մուտքի վիզայի տրամադրման պարզեցում և օտարերկրացիներին մատուցվող ծառայությունների դյուրացում (օտարերկրյա զբոսաշրջիկների համար վճարման դիվերսիֆիկացում՝ՀՀ դրամ, արտարժույթ, զբոսաշրջային կենտրոններում ազատ առևտրի կենտրոնների ստեղծում):

Հայաստանումում ներգնա զբոսաշրջության զարգացման պոտենցիալը ներառում է՝ զբոսաշրջիկների անվտանգությունը համեմատած այլ երկրների հետ, նմանատիպ ծառայությունների մատչելիությունը, զբոսաշրջային կենտրոնների զարգացած ինֆրաստրուկտուրան, պատմամշակույթային ժառանգությունը և այլն: Մեծ բրիտանիայի «Express» պարբերականը 2017-2018թթ. համար եվրոպական և ասիական երկրները զբոսաշրջության անվտանգության տեսակետից դասակարգել է 4 խմբերում՝ ահաբեկչական մեծ վտանգ, միջին վտանգ պարունակող, հավանական վտանգավոր և անվտանգ երկրների: Զբոսաշրջության տեսանկյունից առավել անվտանգ երկրների առաջին հորիզոնականը զբաղեցրել է Հայաստանը[1]: Ուստի հարկ է նշել, որ վերջին ժամանակաշրջանում Հայաստանի տնտեսաքաղաքական համակարգում իրականացված փոփոխությունները, օրենսդրական համակարգում ակնկալվող բարեփոխումները բարենպաստ կազդեն ինչպես ողջ տնտեսության, այնպես էլ զբոսաշրջության վրա՝ փոխելով զբոսաշրջային ծառայությունների նկատմամբ պահանջարկի կառուցվածքը նպաստելով զբոսաշրջիկների քանակի ավելացմանը:

Զբոսաշրջությունը կրելով ազգային տնտեսական քաղաքականության ազդեցությունը, պետք է կարողանա արագ արձագանքել զբոսաշրջության միջազգային շուկայի արագ փոփոխվող մարտահրավերներին: Հայսատանի տնտեսական քաղաքականության առաջնահերթություններից է համարում զբոսաշրջության համաշխարհային շուկայից ավելի մեծ թվով այցելուների և ավելի շատ եկամուտների ներգրավումը: Այդ ուղղությամբ անհրաժեշտ է բարելավել ՀՀ համայնքներում զբոսաշրջային ենթակառուցվածքները, ծառայությունների որակը, քանզի զբոսաշրջության համաշխարհային շուկան շատ արագ է արձագանքում նորարար տեխնոլոգիաների առաջընթացին, սպառողների պահանջմունքների բավարարմանը:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ամալյա Մկրտչի Գալստյան
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու

Համառոտագիր

Զբոսաշրջության դինամիկ զարգացման խոչընդոտների հաղթահարման նպատակով, առաջնահերթ է համարվում ոլորտը կարգավորող օրենսդրական

[1] https://www.express.co.uk/articles/753542.

համակարգի բարելավումը, որը նախկինում իրականացվել է շատ հաճախ առաջադրելով ոչ հեռանկարային, այլ կարճաժամկետ, պահով թելադրված լուծումներ: Զբոսաշրջությունը կրելով ազգային տնտեսական քաղաքականության ազդեցությունը, պետք է ունակ լինի արագ արձագանքել զբոսաշրջության միջազգային շուկայի արագ փոփոխվող մարտահրավերներին՝ մատուցել միջազգային չափանիշներին համապատասխան տարաբնույթ որակյալ զբոսաշրջային ծառայություններ:

Հիմնաբառեր. զբոսաշրջություն, օրենսդրական համակարգ, եկամուտ, քաղաքականություն, որակ:

ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ЗАКОНАДАТЕЛЬНОЙ СИСТЕМЫ, РЕГУЛИРУЮЩЕЙ СФЕРУ ТУРИЗМА

Амалия Мкртычевна Галстян
Научный сотрудник Института экономики им. Котаняна НАН РА,
кандидат экономических наук

Аннотация

Приоритетом преодоления препятствий на пути динамичного развития туризма является совершенствование законодательной системы сектора, который часто реализовывается путем предложения не долгосрочных, а краткосрочных решений. Туризм подвергаясь воздействием национально-экономической политике должен быстро реагировать на часто меняющиеся международные вызовы, предлагая широкий спектр высококачественных туристических услуг в соответствии с международными стандартами.

Ключевые слова: туризм, законодательная система, доход, политика, качество, международный стандарт, цель, безопасность, турист.

WAYS TO IMPROVE THE TOURISM LEGISLATION

Amalya Mkrtich Galstyan
Research Associate, M.Kotanyan Institute of Economics of NAS RA,
Candidate of Sciences (Economics)

Abstract

In order to overcome the obstacles to dynamic development of tourism, the priority is the improvement of the legislative system the sector, which in past has been implemented very often by proposing non-perspective, but short-term solutions.

Tourism with the impact of national economic policy should be able to react quickly to the changies of international market trends and to provide a range of high-quality services in accordance with international standards.

Keywords: tourism, legislative system, income, policy, quality.